DOI: 10.59560/18291155-2026.1-143

ԱՍՏՂԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Երևանի «Կենտրոն»
նոտարական տարածքի նոտար,
Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ

ՆՈՏԱՐԻԱՏԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են նոտարի իրավական կարգավիճակի և նոտարական գործունեության հիմնախնդիրները մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել նոտարիատի և նոտարական գործունեության վերաբերյալ տեսական գրականության մեջ ներկայացված գիտական մոտեցումները, սահմանադրաիրավական առանձին կարգավորումները և կատարված իրավական հետազոտությունների հիման վրա ներկայացվել են որոշակի դիրքորոշումներ առ այն, որ նոտարական գործունեությունն ընկալվում է ա) որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված պետության գործառույթ, բ) որպես իրավական ինստիտուտ, որը կոչված է ապահովելու քաղաքացիական շրջանառության կայունությունը, այդ թվում նոտարական գործողություններ կատարելու միջոցով պաշտպանելու նույն անձանց իրավունքներն ու օրինական շահերը, գ) որպես ուսումնական դասընթաց, որի ուսումնասիրության առարկան և խնդիրներն ուղղված են նոտարական վարույթի և գործունեության հարցերի պարզաբանմանը դ) որպես արդարադատության մարմինների համակարգի տարր՝ օրենքով սահմանված կարգով նոտարին վերապահելով իրավասություն պետության անունից կատարելու նոտարական գործողություններ:

Միաժամանակ, մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի նոտարական պաշտպանության հիմնախնդիրների հետազոտության արդյունքում այդ գործունեությունն ընկալվել է որպես ոչ միայն պետության անունից իրականացվող

մասնագիտական հանրային գործունեության տեսակ, այլև՝ մասնավոր և հանրային շահերի հավասարակշռության երաշխավոր մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգում:

Հիմնաբառեր. նոտար, նոտարական գործունեություն, հանրային շահ, մարդու սահմանադրական իրավունքներ, պետության գործառույթ:

Մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխավորման կարևորագույն միջոցներից է նոտարական գործունեությունը: Ընդ որում, այդ գործունեության կարևորությունը պայմանավորված է տնտեսության զարգացման, ապրանքաշրջանառության ծավալների մեծացման, քաղաքացիական շրջանառության մեջ տարաբնույթ գործարքային հարաբերությունների շրջանակների ընդլայնման հետ: Միևնույն ժամանակ, բարդության պայմաններում այդ գործարքներին պատշաճ կայունություն հաղորդելու համար պահանջվում է համապատասխան միջոցների առկայություն:

Քաղաքացիական շրջանառության իրավական հիմքերի աստիճանական ձևավորումն ինքնին պետությանը մղում է իր վրա վերցնելու պարտավորություններ՝ կանոնակարգելու տվյալ ոլորտում ոչ միայն մարդու և քաղաքացու իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն առնչվող հարաբերությունները, այլև ապահովելու այնպիսի առանձնահատուկ ինստիտուտների ստեղծում, որոնք կերաշխավորեն այդպիսի գործարքների գրավոր ամրագրումը, վավերացումը ու դրանց օրինակների պահպանումը և այլն:

Միաժամանակ, մարդու և քաղաքացու սուբյեկտիվ իրավունքների իրականացման և օրինական շահերի պաշտպանության ապահովման գործում պետության դերով ու նշանակությամբ պայմանավորված ձևավորվել են որոշակի նախադրյալներ ու պայմաններ, որոնց հիման վրա տեղի է ունեցել նոտարիատի ինստիտուտի կայացումը, ինչն իր հերթին կանխորոշել է պետության հետ այդ ինստիտուտի սերտ կապվածությունը:

Յուրաքանչյուր պետության իրավական համակարգի բարեփոխումների համատեքստում առաջնահերթության կարգով ընտրվում է նոտարիատի ինստիտուտի իր մոդելը[1]: Ընդ որում, այդ մոդելն անհրաժեշտաբար պետք է բխի այն տրամաբանությունից, որ մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի

[1] Տե՛ս Florida Statutes. Chapter 117: Notaries Public. § 117.021 // URL: https://law.justia.com/codes/florida/2017/title-x/chapter-117/section-117

պաշտպանությանն ուղղված նոտարական գործունեությունը պետք է զուգակցվի հասարակության և պետության հանրային շահերի ապահովման հետ:

Արդի ժամանակաշրջանում մասնագիտական գրականության մեջ «նոտարիատ» հասկացության էության և իրավական բովանդակության վերաբերյալ միասնական մոտեցման մասին դեռևս խոսք չի կարող լինել[1]: Այն կարող է մեկնաբանվել, մի դեպքում, որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված պետության գործառույթ[2], այնուհետև՝ որպես իրավական ինստիտուտ, որը կոչված է ապահովելու քաղաքացիական շրջանառության կայունությունը, այդ թվում նոտարական գործողություններ կատարելու միջոցով պաշտպանելու նույն անձանց իրավունքներն ու օրինական շահերը[3], իսկ մեկ այլ դեպքում՝ որպես ուսումնական դասընթաց, որի ուսումնասիրության առարկան և խնդիրներն ուղղված են նոտարական վարույթի և գործունեության հարցերի պարզաբանմանը[4]:

Առանձին հեղինակների պնդմամբ, նոտարիատը դիտարկվում է որպես պետական մարմինների և պաշտոնատար անձանց այնպիսի համակարգ, որտեղ վերջիններիս վերապահված է օրենքով նախատեսված գործողությունների կատարում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով[5]:

Իրավագետների մեկ այլ խումբ գտնում է, որ նոտարիատն անհրաժեշտ է ընկալել որպես արդարադատության մարմինների և պաշտոնատար անձանց համակարգ, որոնց օրենքով սահմանված կարգով իրավասություն է վերապահվել պետության անունից կատարելու նոտարական գործողություններ[6]:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան,

[1] Տե՛ս **Максименкова Ю.А**. К вопросу о правовом статусе нотариуса в России // Нотариус. 2023. № 3. էջ 8–11:

[2] Տե՛ս **Гришин К.Г.** Публично-правовое регулирование нотариальной деятельности в РФ: дисс. на соискание уч. степени к.ю.н. - М., 2025, էջ 49- 50:

[3] Տե՛ս **Борисов А.Б.** Большой юридический словарь. - М.: 2010. էջ 442:

[4] Տե՛ս **Зайцева Т.И., Галеева Р.Ф., Ярков В.В.** Настольная книга нотариуса. Т. 1. - М., 2000. էջ 1:

[5] Տե՛ս Гражданский процесс / Отв. ред. Осипов Ю.К. - М., 2006. էջ 462; Гражданский процесс. / Под ред. Треушникова. - М., 2006. էջ 258 և ուրիշներ:

[6] Տե՛ս **Полтавская И., Кузнецов В.** Нотариат. Курс лекций. - М., 2008. էջ 11; Правоохранительные органы Российской Федерации. - М., 2018. էջ 18 և այլն:

իրականացնում է սույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ (կետ 1)[1]:

Հիշյալ կարգավորման բովանդակությունից հետևում է, որ նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, «Հայաստանի Հանրապետության անունից» հաստատում է ոչ միայն դրա օրինականությունը, այլև հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: Ընդ որում, նրա ստորագրությամբ ու կնիքով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրական կարգավորումների շրջանակում այդպես էլ չի սահմանվում «նոտարիատ» եզրույթը, այդուհանդերձ անհրաժեշտ է նկատել, որ այն առաջին հերթին պետք է ընկալել որպես արդարադատության մաս կազմող համակարգ, որտեղ նոտարը պետության անունից Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան իրականացնում է այդ արդարադատությանը նպաստող հանրային ծառայություններ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ժամանակակից նոտարն օժտված է եզակի գործողություն և ծառայություն մատուցելու նշանակությամբ, և, միաժամանակ, երկակի գործառնական բնույթով, քանի որ նա գործում է ոչ միայն հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության սահմանագծի շրջանակում, այլև՝ հանդիսանում է յուրահատուկ կապող օղակ պետության և քաղաքացիական հասարակության միջև:

Այսպես, ասվածի համատեքստում, նոտարը, մի կողմից՝ հանդիսանում է պետության կողմից լիազորված անձ և պետության անունից իրականացնում է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պետական գործառույթ, մյուս կողմից՝ նա իր մասնագիտության նշանակության շրջանակում քաղաքացիական շրջանառության կողմերի համար իրականացնում է իրավական օգնության, խորհրդատվության, պարզաբանման կամ նոտարական գործողությունների կատարումն ապահովող այլ գործառույթներ[2]:

Այստեղից կարելի է ենթադրել, որ նոտարի գործունեությունն անհրաժեշտ է ընկալել որպես մեկը մյուսին բացառող իրավական գործընթացների միասնություն, այն է. մի դեպքում՝ այդ գործունեությունը ոչ միայն իր բնույթով, այլև՝ նշանակությամբ հանրային է, իսկ մեկ այլ դեպքում՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար այն օժտված է մասնավոր նշանակությամբ, քանի որ արտահայտում և միաժամանակ պաշտպանում է կոնկրետ անհատի կամ անհատների մասնավոր շահերը:

[1] Տե՛ս «Նոտարիատի մասին» ՀՕ-274 օրենքը, ՀՀՊՏ 2002.01.10/2(177) Հոդ.2:

[2] Տե՛ս **Черемных И.Г.** Российский нотариат: прошлое, настоящее, будущее. - М., 2009, էջ 4:

Այսպես, նոտարի գործունեությունը հանրային է այն հիմնավորմամբ, որ այդ գործունեության իրավական բովանդակությունը կազմում է հանրային շահը՝ որպես պետության կողմից ճանաչված և սոցիալական հանրության իրավունքով ապահովված հետաքրքրությունների ամբողջություն, որոնց բավարարումը ծառայում է որպես երաշխիք ու պայման նույն հանրության գոյության և զարգացման համար[1]:

Բայց անհրաժեշտ է նաև նկատել, որ հանրային շահը նույն հասարակության հետաքրքրությունների ամբողջությունն է, առանց որոնց բավարարման չի կարող իրականացվել ու պաշտպանվել մասնավոր շահը, ինչպես նաև ապահովվել պետության ու հասարակության բնականոն և կայուն զարգացումը[2]:

Այստեղից ենթադրվում է, որ հանրային շահն իրացվում է պետական մարմինների գործունեության միջոցով, ինչը նշանակում է, որ վերջիններս օժտված են պետական մարմնին բնորոշ հատկանիշներով (պետաիշխանական լիազորությունների առկայություն, պետության խնդիրների ու գործառույթների կատարում, օրենսդրությամբ գործունեության ձևերի ու տեսակների սահմանում, իրավաբանորեն ամրագրված կազմակերպական կառուցվածքի առկայություն, պետական ապարատում այդ մարմնի դերի ու տեղի սահմանում, այլ պետական մարմինների հետ համապատասխան փոխհարաբերությունների առկայություն և այլն):

Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ այդ հատկանիշներն ամբողջ ծավալով բնորոշ են պետական մարմին չհանդիսացող նոտարին, քանի որ վերջինիս նոտարական գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ վերապահվել են համապատասխան խնդիրներ, գործառույթներ և լիազորություններ: Այստեղից իրավաչափորեն հարց է ծագում՝ եթե նոտարը կառուցվածքային առումով չի ընդգրկվում պետական մարմինների համակարգում, ապա ինչպե՞ս կարող է իրականացնել պետության գործառույթ:

Նախ, անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական իրավունքի տեսության և պրակտիկայի շրջանակում առանձնահատուկ նշանակություն ունի այն մոտեցումը, որ պետությունը բացառիկ դեպքերում կարող է պատվիրակել ոչ պետական կազմակերպություններին ու վերջիններիս ներկայացուցիչներին կատարելու պետության որոշակի գործառույթներ[3]:

ՀՀ Սահմանադրական դատարանը, 2016 թվականի մայիսի 10-ի թիվ ՍԴՈ-1271 որոշմամբ անդրադառնալով նոտարների իրավական կարգավիճակի

[1] Տե՛ս **Тихомиров Ю.А.** Публичное право. - М., 2014. էջ 55:

[2] Տե՛ս **Черемных И.Г.** Նույն աշխ., էջ 10:

[3] Տե՛ս Теория государства и права. Курс лекций / Под ред. Матузова Н.И., Малько А.В. - М., 2015, էջ 80:

առանձնահատկություններին, արձանագրել է հետևյալը. «Օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պատվիրակել է նոտարին: (…) Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալն ընդգծում է տվյալ գործառույթի կարևորությունը հանրային կյանքի կազմակերպման տեսանկյունից: Ուստի նոտարը չի կարող պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր (…)»[1]:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը՝ վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(…) Թեև օրենսդիրը սահմանել է, որ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, այսինքն՝ (…) նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձ, հետևաբար նոտարը ինստիտուցիոնալ առումով վարչական մարմին չէ, նոտարը օժտված չէ նաև այլ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կարգավիճակով, այսինքն՝ նոտարը ՀՀ իրավական համակարգում գործառութային առումով նույնպես վարչական մարմին չէ»[2]:

Այնուհետև, Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ «(…) վկայագիր տրամադրելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ (…) վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նոտարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Նման իրավահարաբերություններում նոտարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2016 թվականի մայիսի 10-ի թիվ ՍԴՈ-1271 որոշումը:

[2] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Ստյոպիկ Պողոսյանի վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 որոշումը:

հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում»[1]:

Ներկայացված օրենսդրական նորմերի և դատական ակտերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ նոտարը, մի կողմից՝ հանդիսանում է ոչ պետական ինստիտուտ, որին «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետությունը պատվիրակել է պետության առանձին լիազորություններ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պետական կարևոր գործառույթ իրականացնելու նպատակով, մյուս կողմից՝ նոտարը, օժտված լինելով պետաիշխանական բնույթի լիազորություններով, իր գործունեության ընթացքում իրացնում է պետության հանրային իշխանությունը, ուստի դա չի նշանակում, որ նոտարը կարող է պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր: Այստեղից, նոտարական գործունեությունն ինքնին դիտարկվում է որպես իրավակիրառ պրակտիկայի ինստիտուցիոնալացված այնպիսի ձև, որը չի կարող ունենալ ինչպես առևտրային, այնպես էլ շահույթ ստանալու նպատակ հետապնդող ուղղվածություն:

Այսպիսով, մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի նոտարական պաշտպանության սկզբունքը դրսևորվում է նոտարական գործունեության, այդ թվում նոտարական գործողությունների բովանդակության միջոցով: Ընդ որում, յուրաքանչյուր դեպքում նոտարական գործողությունն անմիջականորեն կամ անուղղակիորեն ուղղված է մարդու և քաղաքացու սահմանադրական այս կամ այն իրավունքների պաշտպանությանը:

Բացի այդ, պետությունը և քաղաքացիական շրջանառության սուբյեկտները շահագրգռված են, որպեսզի իրենց գործողությունները, գործարքները, պայմանագրերը համապատասխանեն օրենքի պահանջներին՝ միաժամանակ լինելով պաշտպանված կոնտրագենտների և ցանկացած այլ անձանց կողմից իրավունքի հնարավոր չարաշահումներից:

Չնայած այն հանգամանքին, որ պետությունը շուկայական տնտեսության պայմաններում չի կարող և չպետք է միջամտի սուբյեկտների քաղաքացիական շրջանառությանը, այնուամենայնիվ, որպես քաղաքացիական ինստիտուտ, նոտարը թեև չի ընդգրկվում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում, սակայն նոտարների հանրությունն իրենց մասնագիտական գործունեության շրջանակում ունեն ինքնակառավարման իրավունք, որով պետությունը նոտարական պալատի միջոցով հնարավորություն է ընձեռում այդ հանրությանն

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 որոշումը:

ինքնուրույն կառավարել իրենց ներքին գործերը ընտրված մարմինների միջոցով կամ ուղղակիորեն, ինչպես նաև լուծել մասնավոր պրակտիկայի և այլ հարցեր:

Նոտարական գործունեության վերաբերյալ ներկայացված սահմանադրական և իրավական հայեցակարգային մոտեցումների ընդհանրական վերլուծությունից հետևում է, որ այն մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգում առավելապես ընկալվում է որպես մասնավոր և հանրային շահերի հավասարակշռության երաշխավոր, ինչը հաստատվում է նոտարի գործողության միջոցով՝ ուղղված իրավական համակարգում օրինականության ապահովմանը, այդ թվում՝ սահմանադրական այնպիսի սկզբունքների միջոցով, ինչպիսին են՝ արդարադատությունը, իրավական որոշակիությունը և այլն: Հենց նոտարական այդպիսի գործողությունների ապահովումը բոլոր դեպքերում բնութագրվում է նոտարի օբյեկտիվ և անկախ գործունեությամբ[1]:

Այսպիսով, ընդհանրացնելով՝ անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) նոտարի իրավական կարգավիճակի և նոտարական գործունեության վերաբերյալ տարբեր մոտեցումների ու տեսակետների տեսական-իրավական համակարգային վերլուծության արդյունքում այդ գործունեությունն անհրաժեշտ է ընկալել՝ ա) որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված պետության գործառույթ, բ) որպես իրավական ինստիտուտ, որը կոչված է ապահովելու քաղաքացիական շրջանառության կայունությունը, այդ թվում՝ նոտարական գործողություններ կատարելու միջոցով պաշտպանելու նույն անձանց իրավունքներն ու օրինական շահերը, գ) որպես ուսումնական դասընթաց, որի ուսումնասիրության առարկան և խնդիրներն ուղղված են նոտարական վարույթի և գործունեության հարցերի պարզաբանմանը դ) որպես արդարադատության մարմինների համակարգի տարր, օրենքով սահմանված կարգով նոտարին վերապահելով իրավասություն պետության անունից կատարելու նոտարական գործողություններ,

2) մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի նոտարական պաշտպանությունը դիտարկվում է որպես մասնագիտական հանրային գործունեության տեսակ, որն իրականացվում է պետության անունից,

3) նոտարական գործունեությունը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգում առավելապես ընկալվում է որպես մասնավոր և հանրային շահերի հավասարակշռության երաշխավոր, ինչը հաստատվում

[1] Տե՛ս **Иванова Ж.Б.** От честного купеческого слова к нотариальной защите в предпринимательской деятельности // Нотариус. 2021. № 2. էջ 46–48:

է նոտարի գործողությունների միջոցով՝ ուղղված իրավական համակարգում օրինականության ապահովմանը, այդ թվում՝ սահմանադրական այնպիսի սկզբունքների միջոցով, ինչպիսիք են՝ արդարադատությունը, իրավական որոշակիությունը և այլն,

4) նոտարի կողմից մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն իրականացվում է բացառապես նոտարական գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ու պահանջներին համապատասխան, որն ընդգծում է այդ գործունեության ոչ միայն հանրային, այլև՝ ոչ ձեռնարկատիրական բնույթը: Այդ իմաստով, թեև իր էությամբ իրավապահպան գործառնական նշանակության համատեքստում նոտարական գործունեության ձեռնարկատիրական բնույթը հակասության մեջ կլինի նրա հանրային էության հետ, այդուհանդերձ հանրային իրավահարաբերություններում այդպիսի գործունեությունը չի կարող հետապնդել շահույթ ստանալու նպատակ՝ որպես առևտրային գործունեության հիմնարար պայման:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. «Նոտարիատի մասին» ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքը, ՀՀՊՏ 2002.01.10/2(177) Հոդ.2:
2. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2016 թվականի մայիսի 10-ի թիվ ՍԴՈ-1271 որոշումը:
3. Վճռաբեկ դատարանի՝ Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Ստյոպիկ Պողոսյանի վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 որոշումը:
4. **Борисов А.Б.** Большой юридический словарь. - М., 2010.
5. **Гришин К.Г.** Публично-правовое регулирование нотариальной деятельности в РФ: дисс. на соискание уч. степени к.ю.н. - М., 2025.
6. Гражданский процесс / Отв. ред. Осипов Ю.К. - М., 2006.

7. Гражданский процесс / Под ред. Треушникова. - М., 2006.

8. **Иванова Ж.Б**. От честного купеческого слова к нотариальной защите в предпринимательской деятельности // Нотариус. 2021. № 2.

9. **Зайцева Т.И., Галеева Р.Ф., Ярков В.В.** Настольная книга нотариуса. Т. 1. - М., 2000.

10. **Максименкова Ю.А.** К вопросу о правовом статусе нотариуса в России // Нотариус. 2023. № 3.

11. **Полтавская И., Кузнецов В.** Нотариат. Курс лекций. - М., 2008.

12. Правоохранительные органы Российской Федерации. - М., 2018.

13. Теория государства и права. Курс лекций / Под ред. **Матузова Н.И., Малько А.В.** - М., 2015.

14. **Тихомиров Ю.А.** Публичное право. - М., 2014.

15. **Черемных И.Г.** Российский нотариат: прошлое, настоящее, будущее. - М., 2009.

16. Florida Statutes. Chapter 117: Notaries Public. § 117.021 // URL: https://law.justia.com/codes/florida/2017/title-x/chapter-117/section-117.

НОТАРИАТ КАК СИСТЕМА ЗАЩИТЫ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ ЧЕЛОВЕКА

Аннотация

В статье рассматриваются вопросы правового статуса нотариуса и нотариальной деятельности в системе защиты конституционных прав человека.

В рамках исследования были проанализированы научные подходы, представленные в теоретической литературе по нотариату и нотариальной деятельности, отдельных конституционно-правовых нормах, а также на основе проведенного правового исследования представлены определенные позиции о том, что нотариальная деятельность рассматривается: а) как функция государства, направленная на защиту прав и законных интересов физических и юридических лиц; б) как правовой институт, призванный обеспечивать стабильность гражданского оборота, в том числе посредством совершения нотариальных действий, защищать права и законные интересы этих же лиц; в) как образовательная программа, предмет и задачи которой направлены на разъяснение вопросов нотариального производства и деятельности; г) как элемент системы органов юстиции, закрепляющий за нотариусом полномочия совершать нотариальные действия от имени государства в порядке, установленном законом.

В то же время в результате исследования проблем нотариальной защиты прав и законных интересов человека и гражданина эта деятельность стала восприниматься не

только как вид профессиональной публичной деятельности, осуществляемой от имени государства, но и как гарант баланса частных и публичных интересов в системе защиты конституционных прав человека и гражданина.

Ключевые слова: Нотариат, нотариальная деятельность, публичный интерес, конституционные права человека, функция государства.

NOTARIAL PROTECTION AS A SYSTEM FOR PROTECTING CONSTITUTIONAL HUMAN RIGHTS

Annotation

This article examines the legal status of notaries and notarial activity within the system of protecting constitutional human rights.

This study analyzes scholarly approaches presented in theoretical literature on notaries and notarial activity, as well as individual constitutional and legal norms. Based on the legal research conducted, it presents certain positions regarding notarial activity as: (a) a state function aimed at protecting the rights and legitimate interests of individuals and legal entities; (b) a legal institution designed to ensure the stability of civil transactions, including through notarial acts, and to protect the rights and legitimate interests of these same individuals; (c) an educational program whose subject and objectives are aimed at clarifying issues of notarial proceedings and activity; and (d) an element of the justice system, granting notaries the authority to perform notarial acts on behalf of the state in accordance with the procedure established by law.

At the same time, as a result of research into the issues of notarial protection of human and civil rights and legitimate interests, this activity has come to be perceived not only as a type of professional public activity carried out on behalf of the state, but also as a guarantor of the balance of private and public interests in the system of protecting the constitutional rights of individuals and citizens.

Keywords: notary profession, notarial activity, public interest, constitutional human rights, state function.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.12.2025 թ., տրվել է գրախոսության 17.12.2025 թ., ընդունվել է տպագրության 22.01.2026 թ.: